

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редація «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-րդ ՏԱՐԻ

20-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական շնորհակալութիւններ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եթէ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՄԲԱԳՐԱՍՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւնում, Թամարայի տանը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редація газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով: Զանգն վճարվում է 2 կոպեկ:

«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ կ'են տպագրվում, այլ տպագրվում են միմիայն լրագրողների յայտարարութիւնները, մասնագիտական և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնագիտական տպագրվելու առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս րոպէս երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Մովսէս և Կոնստանդին Դաւթեան Մէլիքեանները, Մարիամ Դաւթեան Զաւրիկեան, Դարիա Դաւթեան Սիմօնովա, Նուշէ Դաւթեան Աղունակեան, Եղիաբէթ Դաւթեան Մէլիքեան և Սարգիս Եւսեպիական Զաւրիկեան՝ խորին ցաւով յայտնելով առաջինները իրանց սիրելի մօր, իսկ վերջինը՝ իր քրոջ աղջկայ, դէպքով իրենց ստատակի սփէտնիկի այրի ԱՆՆԱ ԲՈՂԳՅԱՆԵԱՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ մահը, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ շնորհ բերել յուզարկաւորութեանը, որ տեղի կ'ունենայ իր սեփական տանից, Վելիամիտիական փողոցի վրա, դէպի Մոզնու ս. Գէորգ եկեղեցին, կիրակի օր, դեկտեմբերի 8-ին, առաւօտեան 10 ժամին: Հոգեհանգիստը լինելու է ուրբաթ և շաբաթ օրերը, երեկոյեան 6 ժամին: 2—2

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք մեզ չենք հակասում.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաղուրի. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա և պրինց Ֆերդինանդ. Չինական գործերը. Արտաքին լուրեր.— ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.— ՇՆՈՒԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՏԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք:

ՄԵՆՔ ՄԵՁ ՉԵՆՔ ՀԱԿԱՍՈՒՄ

Տասն և ինն տարի շարունակ «Մշակ» բաժանորդները և ամբողջ հայոց հասարակութիւնը ընտելացել են այն մտքին թէ «Մշակը» յարձակողական ուղղութիւն ունի, թէ «Մշակը» մարտնչում է հայերի պաշտօնականութեանը, քննադատում է ազգի բարք ու վարքը, վերջապէս հետեւում է ոչ թէ քննադատող, շողորդով ուղղութեանը, այլ խիստ ինքնաբերական ուղղութեան:

Եւ ահա մեր լրագրի այս տարվայ 119-որդ համարի առաջնորդողը «Վերջին քսան տարի» վերնագրով զարմացրեց շատերին: «Մշակը», որը միշտ յարձակվում է մեր պաշտօնականութիւնների վրա, ասում էին շատերը, յանկարծ գովասանական մի յօդուած է գրում հայերի մասին, այն միտքը յայտնելով թէ հայերը ընդունակ ազգերից մէկն են, թէ եւրոպական, համամարդկային բարեգործութեանը շփվելով, նրանք իրացնում են բարեգործական բարիքները, աւելի ընդունակ են դառնում առաջադիմութեան, և ոչ թէ անընդունակ ազգերի պէս ընկնում անհետանում են աւելի բարձր բարեգործութեան հետ շփվելով... Եւ ահա շատերն այնքան կարճատեւ են եղել, որ մեր յիշված յօդուածը ընդունեցին որպէս հակասութիւն մեր նախընթաց գաղափարներին...

Սակայն «Մշակ» № 119-ի առաջնորդողը ամենեւին չէ հակասում տարիների ընթացքում մեր յայտնած մտքերին: Այո՛,

մենք մեզ չենք հակասում, և ահա ինչ հիմունքների վրա:

Հայը, որպէս անհատ, վերին աստիճանի ընդունակ է, օժտված է ամեն տեսակ մարդկային քաղաքակրթական յատկութիւններով: Հայը մտնում է գիւղատնտեսական դարձում: Եւ ամենաընդունակ աշակերտներից մէկն է դառնում իր ընդունակութիւնների շնորհով համեմատելի գիւղատնտեսական մէջ ամենաբարձր աստիճանների, դառնում է աշխույժ գործադատ, որը տանում է իր առաջնորդութեանը յանձնած զորքը դէպի յաղթութիւններ: Հայը համալրարարում ուսում առնելուց յետոյ, մրցում է իր ընդունակութեամբ օտարազգի ամենաընդունակ ուսանողների հետ, նա գրաւում է եւրոպայում պրոֆէսորի ամբիօնը և իր հմտութեամբ աշույժ կերպով մրցում է օտարազգի պրոֆէսորների հետ: Հայը սովորում է երգեցողութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, բժշկութիւն, իրաւագիտութիւն և այլն.— և այդ բոլոր ասպարէզներում աշխույժ է ընկնում, որպէս արտակարգ ընդունակութիւնների տեր անձնաւորութիւն և կարողանում է մրցել այն շրջանի մէջ եղած նոյն արհեստն ունեցող միւս անհատների հետ, որոնք պատկանում են քաղաքակրթութեամբ իրանց աւելի բարձր մակերեւոյթի վրա կանգնած ազգերին...

Այդ այդպէս լինելուց յետոյ, ի՞նչ ենք տեսնում երբ վերին աստիճանի ընդունակ այդ անհատներից բաղկացած ամբողջ հասարակութիւնը փորձում է գործել հաւաքական ոյժերով.— այն ժամանակ տեսնում ենք առաջին երեւոյթի կատարեալ հակապատկեր. որքան հայը ընդունակ է որպէս անհատ, այնքան էլ այդ բոլոր ընդունակ անհատներից բաղկացած հաւաքական մարմինը, հասարակութիւնը՝ վերին աստիճանի անընդունակ է հանդիսանում որ և է հասարակական օրինաւոր գործ կատարելու:

Ուրեմն մենք մեզ չենք հակասում: Մենք պնդում ենք միայն, որ իւրաքանչիւր հայ ջոկ վերցած լինի դա գիւղատնտեսական, բժշկական, նկարչական, գործ, փաստաբան, պրոֆէսոր, վաճառական և այլն, օտար շրջանի մէջ տեղափոխվելով.— իր անհատական ընդունակութիւններով ոչ թէ միայն կը մրցի օտարազգի արհեստակիցների հետ, բայց և ամենապատուաւոր տեղ կը գրաւէ իր արտակարգ ընդունակութիւններով օտար շրջանում: Բայց հենց որ նոյն ընդունակ անհատները իրանց հայրենիքում, իրանց նեղ շրջանում կը հաւաքվեն և կուգնան միասին, հաւաքական ոյժերով գործել իրանց հասարակութեան օգտին, կը սկսեն հիմնել դպրոցներ, ընկերակցութիւններ, ընդհանուր հաստատութիւններ, այլ և այլ բարենպաստ ընկերութիւններ.— անմիջապէս երևան կը դան դժգոհութիւններ, կիրք, անհամբարաշտութիւն, նախանձ, թշնամութիւն, իրար ֆլախելու, իրար ոչընչացնելու ցանկութիւն, հանրային գործ ընդհանուր, միահամուռ ոյժերով առաջ տանելու անընդունակութիւն, խտրութեան, խռովականութիւններ, անկարգութիւններ և այլն...

Այդ է պատճառը, որ մեզանում ոչինչ ընդհանուր գործ, հաւաքական ոյժերով առաջ տարվող գործ՝ երբեք չէ աջողվում:

Այո՛, կան ազգեր, որոնց իւրաքանչիւր անհատը, ջոկ ջոկ վերցած, այնքան էլ չէ փայլում արտակարգ մարդկային ընդունակութիւններով, բայց ամբողջ ազգը միասին վեր առած՝ հանդիսանում է որպէս վերին աստիճանի ընդունակ ազգ: Ընդհակառակն հայ ազգը պատկանում է այն ազգերի թւին, որոնց անհատները ջոկ ջոկ վերցած վերին աստիճանի ընդունակ են, օժտված են ամեն տեսակ մարդկային արտակարգ յատկութիւններով, իսկ միասին համախմբված նոյն ազգը հանդիսանում է որպէս իր ներքին ոյժերով փոխադարձաբար ոչնչացնող, քայքայող, քանդող մի հաւաքական մարմին...

Այո՛, որքան համապատասխան է հայը, որպէս անհատ, այնքան հակապատասխան է նա որպէս ազգութիւն, որպէս հասարակութիւն, որպէս հաւաքական մարմին:

Այն ներքին ինքնառնչացնող ոգին, որ խոր արմատներ է դրել հայ ազգութեան մէջ.— նոյն իսկ պատմութիւն է լինում հայի մշտական ձգտման՝ հեռանալ, միշտ հեռանալ, ցրվել, ցրվել ու ցրվել լինել իր բնիկ երկրից, իր բնիկ հասարակութիւնից: Հայը ներքին ազդմամբ դգում է որ աշուղութիւն կունենայ որպէս ամեն մարդկային ընդունակութիւններով օժտված մի անհատ որ և է օտար շրջանի մէջ, բայց անկարող կը լինի ապրել, գործել, առաջ գնալ, օգտակէտ հանդիսանալ իր ցեղակիցների շրջանի մէջ, քանի որ իր ցեղակիցներից բոլոր միւս անհատներն էլ իրան նման են, և բոլորն էլ մի ձգտում ունեն միայն՝ իրար մի սն ու ա ել...

Ֆիզիկայի մէջ մեզ յայտնի է կենտրոնաձիգ (центростремительный) և կենտրոնախոյս (центробежный) բնական օրէնքը... Մենք համոզված ենք որ նոյն օրէնքով կառավարվում են և ազգերը, ցեղերը. կան ցեղեր, որոնց յատկանիշ է կենտրոնաձիգ յատկութիւնը, այսինքն համախմբվելու, կենտրոնանալու, հաւաքական կենսաբան ապրելու ձգտումը, իսկ ուրիշ կողմից կան ազգեր, որոնց յատկանիշ է կենտրոնախոյս ձգտումը, այսինքն միմեանցից ամեն ուղղութիւններով, ամեն բաղի ուսնելով փախչելու, ցրվել ու ցրվել լինելու, ցրվելու ձգտում, քանի որ նրանք իրանց ներքին ազդմամբ դգում են թէ իրենք անընդունակ են հաւաքական կենսաբան միասին ապրելու...

Այդ տեսակ ազգերին պատկանում են և հայերը:

Ուրեմն մենք մեզ չենք հակասում: որքան հայերը ընդունակ են որպէս անհատներ, այնքան էլ անընդունակ են որպէս հասարակութիւն:

Այդ ճշմարտութեան վրա թող լաւ մտածեն մեր հասարակաց գործիչները: Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Դեկտեմբերի 2-ին

Երէկ, ամսիս 1-ին, տեղի ունեցաւ մեծ ընդհանուր ժողովուրդական զանգարող, ոստիկանների և պարսիկների մէջ: Ընդհանուր սկսվեց ժամը 3-ից և շարունակվեց մինչև երեկոյեան ժամը 10-ը: Ընդհանուր զանգարող էր մի լիզդի, որը կիրակեայ բաղարում հանել էր ռուս բանակը: Գրպանից 8 ռ. այդ տեսնելով բանակը ընկերները, իսկոյն բռնում են յանցաւորին և յանձնում ոստիկանութեան. ինչպէս է լինում ոստիկանութիւնը իսկոյն և եթ նրան բաց է թողնում. այդ տեսնելով բանակը սատակ վրդովվում են և յարձակվում ոստիկանական պաշտօնեաների վրա... յարձակում գործողները բռնվում և ոստիկանատուն են տանվում: այս տեսնելով, բանակը ներք աւելի ևս վրդովվում են, մասնաւոր օրքի էլ խմած են լինում, և յարձակվում են ոստիկանատան վրա՝ իրանց ընկերներին ազատելու մտքով: Այդտեղ արդէն սկսվում է ընդհանուր կատաղի կերպով: չարտվում են քարեր, արձակվում են հայհոյանքներ, որոնց փոխարինում են ատրճանակների ճալթիւններ և սրերի շառաչիւններ. այստեղ խառնվում են և պարսիկները, որովհետեւ կատաղի ամբոխը յարձակվում է և նրանց խառնութեան վրա, կոտորում, փշուրում է դռներն ու լուսամուտները, դէս ու դէն է չլքրտում, ոտի տակ է տալիս խառնութեան իրերը: Թէ ուսմանքի և թէ պարսիկների կողմից ընդհանրվում էին մինչև 1,000—1,200 հոգի մի քանի տեղերում միաժամանակ. բացի մի քանի ոստիկանական աստիճանաւորներից, որոնք դէպի ջարդ կրեցին, հարուածվեց նաև ոստիկանապետը. կան սպանվածներ և բազմաթիւ վիրաւորվածներ. 300 զինուորական և 50-ի քաւի կողակներն օգնութեամբ հազիւ հազ վերականգնվեց խաղաղութիւնը երեկոյեան 9 ժամին: ***

ՆԱՄԱԿ ԻԿԴԻՐԻՑ

Նոյեմբերի 20-ին

Մեր կողմերում առաջ սովորութիւն էր, երբ կաթողիկոսի ընտրութեան համար պատգամաւոր ընտրվէր, ամբողջ զաւառի հայ ժողովուրդը պէտք է մի տեղ հաւաքվէր և այնպէս կատարվէր պատգամաւորների ընտրութիւնը:

Այժմ փոխված է նախկին սովորութիւնը: Ամեն մի դիւղից ընտրվում են երկու երկու մարդ, և բոլորը մի տեղ ժողովվելով՝ ընտրում են զաւառական երկու պատգամաւորներ. նրանք էլ իրանց ջուշն տալիս են թեմական պատգամաւորին: Ամսիս 18-ին ևս նոյնպէս եկաւ իզդիլմալս դիւղը զաւառիս գործակալ Սամուէլ Զահանյան իզդիլի դաւալայի հետ: Կարծում էինք թէ պէտք է ամբողջ ժողովուրդը մի տեղ հաւաքվել ընտրութիւն սկսվել: Մէկ էլ լսեցինք, որ պ. դաւալան իր մի քանի համախոյս մարդկանցով ընտրել, վերջապէս է պատգամաւորների ընտրութիւնը:

Նոյն ժողովում զանազա մարդիկ ասում էին, թէ ութ հոգի ժողովրդականներին, որոնք եկեղեցու պատի տակ էին նստած, առանց նախագահ քահանայի նիստ բացելուն սպասելու, դաւալան ասեց. «Ես ընտրում եմ Սեդրակ Նազարեանին և Կարապետ

Ղազարեանին պատգամաւորներն էր մի մարդ ասել էր թէ այդ անկանոն ընտրութիւնն է, պէտք է ուխտուն տուն ժողովուրդը հրաւիրել՝ չեմ կարող է իմ հրամանին հակառակել, զոռացել էր զաւրկան, և մի թերթ յանձնելով գիւղական տա- նուտէրէն, խտրել պատուիրէր էր ստորագրել տալ շուտով: Ասեցին զաւրկային, «ինչո՞ւ ժողովուրդին չէ հրաւիրում ինչպէս կարգն է», նա թէ «ես պարտական չեմ ժողովուրդին կանչելու»: Գիւղի տա- նուտէրը ընտրութեան թերթը ձեռին պտտում էր տնից տուն ստորագրել տալու: Շատ մարդ գործը անկանոն նկատելով չէր ստորագրում: Մի քանիսն էլ երկիւղից ստորագրեցին: Դեռ մինչև այժմ էլ նոյն թերթը մուրացկանի պէս պտտում է և չէ վերջացել ստորագրութիւնը:

Խզդիմաւայի կէսը թուրքեր են ընակվում: Շատ անգամ մի չնչին բանի համար զաւրկան ամբողջ հասարակութիւնը ժողովում է և կանոնա- տու ընտրութիւն անում: Իսկ երբ որ կաթողիկոս ընտրելու ձեռնարկութիւնը այսպէս աննշան, անկա- նոն անցավ, թուրքերն ասել էին գիւղի տանու- տէրին թէ «ինչո՞ւ հասարակ մարդու համար կանո- նաւոր ժողով անում էք, իսկ ձեր կաթողիկոսի համար ոչ»: Յայտնի բան է տանուտէրը չէր կա- րող ոչինչ ասել թուրքերի այդպիսի արդարացի նկատողութեան համար: Բայց զաւրկան մի և նոյնն անում էր և միւս գիւղերում:

Գուցէ ասող լինի մեզ թէ, ապա գործակալ- նախագահը զոնէ ինչո՞ւ իր արտօնութիւնը չէ կարգադրում այդպիսի դէպքերում ճշգրտին պա- հել: Գործակալը, աղիւս ընթերցող, մի կտոր հացի համար պաշտօն ստացել է, նա էլ որ իր իրաւունքը լիազօր բանացնէ, մէկ էլ տեսար զա- լական մի խնդիր ստորագրել տուեց ու ինքը վաւերացրեց և ուղարկեց, ուր հարկն է, գործա- կալին հացից զրկեց: Կարծեմ հասկացար ինձ, ընթերցող:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՍՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 3-ին

«Մշակ» լրագրի 136-րդ համարում յարգելի պ. Գաբրիէլ Սունդուկեանց հրապարակով յայտա- րարում է, որ թատրոնական Մասնագիտովի կողմից ոչ ոք նրան չէ հաղորդել, որ նրա հա- մար բազկաթու է յատկացրած, իսկ մի վեց տող յետոյ նոյն նամակում, պ. Սունդուկեանց շարունակում է՝ «Եթէ ինձ որ և է պատշաճ ճա- նապարհով հասած լինէր Մասնագիտովի որոշու- մը, ես, ի հարկէ, և այն...»

Ընթերցողը ևս կը նկատէ, որ պ. Սունդու-

կեանց ինքն, կողմնակի կերպով, խոստովանում է, որ նրան մի այն պատշաճ ճանապարհով չէ հասած Մասնագիտովի վճիռը, հե- տեապէս պարզ է, որ անպատշաճ ճանապարհով հասած է: Նախ, որպէս զի հասարակութիւնը զաղափար ունենայ այդ ճանապարհի վրա, և ի նկատի ունենալով, որ Մասնագիտովի վրա դանաղան անկիւններէց գործած երկչոտ յարձա- կումները վերջին օրերումս թէև բացարձակ, բայց աւելի անհասկանալի կերպարանք են ստացել, ստիպված ենք պ. խմբագրի, խնդրել ձեռնարկից սոյն մեր մի քանի տողը ձեր լրագրում հիւրա- սիրէք:

Պ. Սունդուկեանի հետ բանակցողը ես եմ կ- ղել և ահա մասնագիտութիւնները: Մի քանի դուր այցելութիւններէց յետոյ պ. Սունդուկեանի մօտ, քանի որ նրան տանը չէինք գտնում (պ. Յ. Յովհաննիսեանի հետ քանիցս գնացած ենք) վեր- ջապէս օգոստոս ամսի 18-ին Մասնագիտովի յայ- տարարութեամբ ես պիտի դարձեալ պ. Սունդու- կեանցի մօտ գնայի, սակայն միւս օրը, երեկոյեան ժամը 5-ին, Գլխավոր պալատիցում պ. Տէր-Յով- սէփեանի խանութի դիմաց պ. Սունդուկեանին հանդիպելով, ես պատիւ ունեցայ հետեւել երեք առաջարկութիւնն անել՝ 1) որ նա բարեհաճէ իր վրա առնել, ապագայում կազմակերպողականական մասնագիտովի նախագահութիւնը նոր թատերա- կան դրամաիւրի արժանաւորութիւնները քննե- լու, 2) թող տալ մասնագիտովի կազմած բնակր- տուարի մէջ իր միւս աշխատութիւններին թուով մտցնել նաև «Ամուսններ» պիէսան և 3) ասեցի «Մասնագիտովի ձեռք համար մի հատ Ի կարգի բազկաթու է յատկացրել»: Պ. Սունդուկեան պա- տասխանեց՝ 1) զբաղականական մասնագիտովի չեմ կարող մասնակցել, որովհետեւ զբաղված եմ, 2) «Ամուսններ» չեմ տալ, քանի որ փոփոխում եմ և 3) ձեր բազկաթուից հրաժարվում եմ, յայտնելով «նորահայտութիւն»։ Ահա ասոյ ճշ- մարտութիւնը:

Ստաց է, որ այնուհետև Մասնագիտովի ան- դամներէց ոչ ոք չէ փորձել ֆրակ և սպիտակ ձեռնոցներ հագնել և պ. Սունդուկեանցի մօտ երթալ, տոմար և առաջարկելու, թէև նրա պիէ- սաները խաղալիս, իւրաքանչիւր անգամ, նրա համար մի օթեակ և մի բազկաթու ուղարկել է, որոնց նա փառաւորապէս յետ է դարձրել:

Բնականաբար մեղանք միայն մէկն է ճշմարիտ խոսում և թէ տողերիս գրողը, թէ իմ ընկերներս հարկ չենք համարել պ. Սունդուկեանցի հետ բա- նակցելիս զբաւոր դոկումէնտներ ունենալ ձեռ- ներումս: Գրաւոր դոկումէնտները, մեր դարում,

նոր երկի թարգմանութեամբ կամ մինչև այժմ անյայտ անտիպ գրութիւն տպագրութեամբ, շա- տորէ խոստանում են զանազան ընծաներ, թան- գազին իրեր. կան և այնպիսիները, որոնք խօսք են տալիս տեղ, պաշտօն գտնել իրանց բաժա- նորդներին և այն և այն: Լրագրական յայտա- րարութիւններ, բնկալմանի և խոստումների բազմապատկութիւնը, հարստութիւնը և բազմատե- ւակութիւնը ամենից աւելի նկատելի է այստեղ — Եւրօպայում: Ի՞նչիւր ասես չեն խոստանում տալ իրանց բաժանորդ ընթերցողներին եւրօպա- կան պարբերական բազմաթիւ հրատարակութիւ- ները և նրանք մեծ մասամբ կատարում են իրանց խոստացածները ճշգրտին և այդպիսով իրանց թերթը հետաքրքիր, բազմակողմանի, լուրջ և հա- րուստ դարձնելով, գրաւում են իրանց կողմը բաժանորդներին ահպել մի քանակութիւն, ո- թով ինչպէս ինքը խմբագիրը, նոյնպէս էլ բաժա- նորդները գոհ են մնում:

Մենք հայերս էլ ունենք մամուլ, լրագրութիւն իրանց հարկաւոր և մինչև անգամ հաղաբաւոր բաժանորդներով: Նրանց համար էլ է գալիս նոր տարին, նոր տարեշրջան: Մի հարց. արդեօք ինչ է խոստանում հայ պարբերական մամուլն իր բա- ժանորդներին առաջիկայ տարում և որքան է կատարում և կատարել անցեալ տարիներում այդ մամուլը իր դրած պարտականութիւնները, որ- քան գոհ են իրանց վիճակից, իրանց հրատարակչա- կան աշխատութիւնից մեր պարբերական թերթերը և որպէս զո՞ւ է նրանցից բաժանորդ-ընթերցող հասարակութիւնը:

Այսպիսով չեմ լինի, եթէ ասեմ, որ որպէս ա- ռաջիւնները, նոյնպէս էլ երկրորդները դժգոհ են: Խմբագրութիւնները չունենալով իրանց ցանկա- ցածի չափ բաժանորդներ, դժուարացել են կա- տարել իրանց խոստումները, իսկ ընթերցողները,

հարկաւոր են դրամական հաշիւների մէջ, բայց մենք դեռ չէինք կարծում թէ խօսքի համար հար- կաւոր են դոկումէնտներ:

Ընդունեցէք պ. խմբագիր խորին յարգանքս՝ Ալէքսանդր Թարխանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, ուրբաթ օր, դեկտեմբերի 6-ին, Նորին Կայսերական Բարձրութեան Թագաժառանգ Յե- սարկովիչի անուանակոչութեան օրը՝ Թիֆլիսի Սիօնի մայր-եկեղեցում գահադրական մաղթանք- ներ կատարվեցան: Քաղաքը զարդարված էր դրօ- չակներով, իսկ երեկոյեան լուսաւորված էր:

Յայտարարութիւնների շատութեան պատճառով «Մշակ» ներկայ 139-որդ համարը հրատարա- կում ենք 6 երեսից բաղկացած:

Մենք լուրս ենք, որ այս ամսի կէսին մեր հայ երգչուհի օրիորդ Գէորգեան և մեր երիտասարդ երգիչներ, պ. պ. Մաղաթեան և Եղիազարեան ուղևորվելու են միասին Գ.Ս.ՆԱԿ, այստեղ եր- գելու համար: Մեր արտիստները այդ փոքրիկ խումբը ոչ թէ կոնցերտներ է տալու, այլ դնելու է օպերան և իր ց մի քանի գործողութիւններ: Դա նորութիւն կը լինի Գանձակի համար:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ նոր քան և հինգ ընթերցանող թղթադրամներ նմուշներ շուտով կը ներկայացվեն պետական խորհրդին: Թղթադրամի վրա նկարված է Նորին Մեծութեան Թագաւոր Կայսրի պատկերը: Նոր թղթադրամները շուտով կը հրատարակվեն այն կան լեզուով, այլ մի ինչ որ ռամական բարբա- ռով: Խաղը թող էր: Վատ չէին Աբրահամեան բարձր պաշտօնեայ որդու դերում: Տիկին Սի- բանուշ և պ. Պետրոսեան, ինչպէս միշտ, միա- կերպ էին մինչև երբորդ գործողութիւնը: Այդ եր- կուսն էլ տանելի են, նոյն իսկ մի մի անգամ լա- են՝ միայն այն ժամանակ, երբ իրանց դերերը դե- ան: Սակայն «Հողով աղքատներ» պիէսայի երրորդ գործողութեան մէջ տիկին Սիբանուշը իր դէպքով և գեղեցիկ խաղով կատարեալ ֆուրոր արեց և սաա- ցաւ բուռն ծափահարութիւններ: Նոյն գործողու- թեան մէջ պ. Պետրոսեանն էլ իր դերը կատա- րեց բաւական մտածված և աշուղ կերպով:

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ նոր քաղաքային կանոնադրութեան վերաբերեալ օրի- նագիծը կը քննվի պետական խորհրդում եկող տարի:

Ներքին գործերի մինիստրութիւնը մերժել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան այն 1,300,000 ռուբլու փոխառութիւնն անելու, որի մասին մեր դուման վիճի էր կայացրել անցեալ տարի: Մինիստրութիւնը կասկած է յայտնում, որ սպա- սելի եկամուտները կարողանան ծածկել փոխա- րութեան տոկոսները:

Ինչպէս լսել է «Нов. Обозрение» լրագիրը,

տեսնելով լրագրի սառնութիւնը, անհետաքրքրու- թիւնը, տաղալիքի միանմանութիւնը, նորութեան, լրջութեան, ներթի պակասութիւնը, զաղաքել են մի լրագիր ստանալուց, որից ոչ մի նիւթ, ոչ մի օգուտ չեն քաղել տարիներ ընթացքում, չը նա- յելով որ իւրաքանչիւր տարի բաժանորդագիրը լրով ինչպէս ինքը խմբագիրը, նոյնպէս էլ բաժա- նորդները գոհ են մնում: Եւրօպայում: Ի՞նչիւր ասես չեն խոստանում տալ իրանց բաժանորդ ընթերցողներին եւրօպա- կան պարբերական բազմաթիւ հրատարակութիւ- ները և նրանք մեծ մասամբ կատարում են իրանց խոստացածները ճշգրտին և այդպիսով իրանց թերթը հետաքրքիր, բազմակողմանի, լուրջ և հա- րուստ դարձնելով, գրաւում են իրանց կողմը բաժանորդներին ահպել մի քանակութիւն, ո- թով ինչպէս ինքը խմբագիրը, նոյնպէս էլ բաժա- նորդները գոհ են մնում:

Մենք հայերս էլ ունենք մամուլ, լրագրութիւն իրանց հարկաւոր և մինչև անգամ հաղաբաւոր բաժանորդներով: Նրանց համար էլ է գալիս նոր տարին, նոր տարեշրջան: Մի հարց. արդեօք ինչ է խոստանում հայ պարբերական մամուլն իր բա- ժանորդներին առաջիկայ տարում և որքան է կատարում և կատարել անցեալ տարիներում այդ մամուլը իր դրած պարտականութիւնները, որ- քան գոհ են իրանց վիճակից, իրանց հրատարակչա- կան աշխատութիւնից մեր պարբերական թերթերը և որպէս զո՞ւ է նրանցից բաժանորդ-ընթերցող հասարակութիւնը:

Այսպիսով չեմ լինի, եթէ ասեմ, որ որպէս ա- ռաջիւնները, նոյնպէս էլ երկրորդները դժգոհ են: Խմբագրութիւնները չունենալով իրանց ցանկա- ցածի չափ բաժանորդներ, դժուարացել են կա- տարել իրանց խոստումները, իսկ ընթերցողները,

բայց ամենայն մի երևոյթ, պարզ է, որ հետե-

«Արձագանք» թղթալուծիւն է ստացել առաջի- կայ տարվանից շաբաթը 3 անգամ հրատարակվե- լու:

«Մշակ» ներկայ համարում տպում ենք Թիֆ- Լիսի հայոց թատրոնական մասնագիտովի անդամ պ. Ա. Թարխանեանի պատասխանը «Մշակում» տպված պ. Գաբրիէլ Սունդուկեանցի տպված նա- մակին: Շատ ուրախ կը լինենք զարձեալ պ. Սունդուկեանցի պատասխանը ստանալ և դրանով վերջ կը տայինք հարցի վերաբերմամբ ծագած բանակութիւնը:

Հետեւեալ հինգշաբթի, 12-ին դեկտեմբերի, Թիֆլիսի հայոց դերասանական խումբը նա- կայացնելու է Արքունական թատրոնում ոչ թի Գօգոլի «Բէշմեդ» պիէսան, ինչպէս որ յայտնի էինք, այլ պ. Շիրվանշադի «Իշխանհի» պիէ- սան:

Հինգշաբթի, դեկտեմբերի 5-ին, Թիֆլիսի հայոց դերասանական խումբը Արքունական թատրոնում ներկայացրեց Պատէկինի «Հողով աղքատներ» յայտնի պիէսան, թարգմանութիւն Ս. Հախու- ւեանի: Իրան պիէսայի մասին, մի քանի տարի առաջ, մենք ունէինք «Մշակի» Բանասիրական բաժնում մի երկար և մանրամասն քննադատու- թիւն, երբ մեր քաղաքում գոյութիւն ունէր Պալ- մի ռուսաց դերասանական խումբը, ուրեմն ա- լելորդ ենք համարում նոյն պիէսայի բովանդա- կութեան և տեսլիցայի մասին նորից խօսելու: Իսկ ինչ որ վերաբերում է պ. Հախոււեանի թարգմանութեան, դա բաւական աշուղ է ընդ- հանրապէս, միայն, մեր կարծիքով, աւելորդ էր Սիվողուչիին դերը թարգմանել ոչ թէ մեր գրա- կան լեզուով, այլ մի ինչ որ ռամական բարբա- ռով: Խաղը թող էր: Վատ չէին Աբրահամեան բարձր պաշտօնեայ որդու դերում: Տիկին Սի- բանուշ և պ. Պետրոսեան, ինչպէս միշտ, միա- կերպ էին մինչև երբորդ գործողութիւնը: Այդ եր- կուսն էլ տանելի են, նոյն իսկ մի մի անգամ լա- են՝ միայն այն ժամանակ, երբ իրանց դերերը դե- ան: Սակայն «Հողով աղքատներ» պիէսայի երրորդ գործողութեան մէջ տիկին Սիբանուշը իր դէպքով և գեղեցիկ խաղով կատարեալ ֆուրոր արեց և սաա- ցաւ բուռն ծափահարութիւններ: Նոյն գործողու- թեան մէջ պ. Պետրոսեանն էլ իր դերը կատա- րեց բաւական մտածված և աշուղ կերպով:

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈՒՅ մեզ գրում են. «Գեղեկու- րերի 1-ին, կիրակի օր, տեղիս թատերասերների

աւանդ է որոշ պատճառների և եթէ մենք լա- ուսումնասիրեցէք այդ պատճառները, այն ժամա- նակ հնչաւ կը լինի իրանց վերացնելով և փոխա- րելով վերջ դնել ցաւալի երեւոյթի գոյութեանը: Կամ եթէ նոյն իսկ անկարող լինենք բոլորովին կերպարանափոխել, զոնէ մասամբ ուղղած կը լինենք, և այդպիսով կատարած կը լինենք մի պարտականութիւնը դէպի հասարակական ցաւ- րը:

Ումը մեղանք յայտնի չէ այն մտաւոր խաւը որի մէջ խաղաւորում էր մեր երկրորդ մինչև 10 ական թուականները: Գաբրիէլ, Ռուսցի, մամուլ թատրոն, հոգեդրականութիւն, ինտելիգենցիա, զբաղք բոլորն էլ այնպիսի մի նեղ, սահմանա- փակ շրջանակի մէջ էին գտնվում, որ կարելի էր նրանց չունեցած համարել: Բայց ահա 60-ական թուականներից մեր կենանքը մտնում է մի ուրիշ շրջանի մէջ, տիրող խաւերի մէջ երևում են պարտականութիւնը դէպի հասարակական ցաւ- րը:

30-ական և 60-ական թուականները այն շրջ- ջանն է, որի ընթացքում մեզ տիրապետող ռու- սաց զբաղականութիւնը հասել էր իր փայլի ամենա- բարձր աստիճանին. Ֆրանսիական մեծ յեղափո- խութեան ուժգին հարուածները հասել էին նաև մինչև Ռուսաստան. այդ համաշխարհային փրկա- բար փոփոխիւր մաքրեց, սրբեց մաքրութիւն: Դա միջոցը և հոգին դարեւոր նախապաշարմից: Դա մի մահացու հարուած էր ամբողջ անցեալ դա- րերին: Մեռաւ, զնչացաւ հինը և նրա աւերակ- ների մէջ ծնեց նոր միջոցը, նոր հոգին... Ռու- սաստանում այդ շրջանում ահա ծնվեցին այլ նոր կենանքի արտապայտիչ ոգիները՝ Պուշկին, Գո- րո, Լերմոնով, Բլոկ, Դոբրովոլսկի, Գոնչարով, Զեյդլին, Գեյն- րասով և շատ ուրիշները այդ շրջանի և ողոր-

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ԹՂԹԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԳԻՆՋԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԵՐԳԵՅ ՄԻԽԱՅԼՕՎԻՉ ԱՆՆԱՆՕՎԻ

Ձգույցնում է իր բոլոր առնություններն, որ վերջին ժամանակներս, այլև առհաս ռուսական պաշտոնական պարտքերի և նրանց բարձր արժանաւորութիւնը, հանդէս եկան բազմաթիւ կեղծումներ, և մինչև անգամ «АНАНОВ» ազգանունը նմանողութեան է ենթարկուած, տպուած է մի և նոյն տառերով АНАНОВ քառեր: Հասկանալի է, որ այդ անվում է այն նպատակով, որ Անանովի լաւ տեսակի ապրանքները հետ միաժամանակ ծախվեն և իրանց ստոր տեսակի ապրանքները, որոնք Անանովի ֆաբրիկայի ապրանքներին հետ ոչինչ նմանութիւն չունեն: Թէև այդ տեսակ նմանողութիւնները և ապացուցանում են, որ Անանովի ապրանքները ամեն մրցութիւնից դուրս են, սակայն կամենալով որ հասարակութիւնը մոլորութեան մէջ ընկնի և վատ ապրանքներ ձեռք բերէ, Անանովի ֆաբրիկան զգուշացնում է, որ իր թղթերի իւրաքանչիւր թերթը կրում է ֆիրմայի դրոշմը և պէտք է պահանջել, որ բոլոր էտիկետները վրա ստորագրված լինի ՍԵՐԵՅ ԱՆՆԱՆՕՎԻ ստորագրութիւնը:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Անանովի գործարանի պապիրոսների թղթի տնտրակները և զիւղաները պատրաստուած են ֆրանսիական ամենալաւ և անշեղ թղթից (արժանագած է Բժշկական վարչութեան թղթութեան մարտի 21-ին, 1889 թ.), համարվելով աշխարհի ամենալաւերը և վարձատրված լինելով 1888 թ-ին Բրիւսէլի համաշխարհային ցուցահանդէսում մեծ արծաթեայ մեդալով, 1889 թ. Մարդիկ ցուցահանդէսում մեծ ոսկեայ մեդալով, նոյն թ-ին Մարդիկ jury շնորհեց Անանովին diplome d'honneur, որը համապատասխան է մեր պետական գերբին: Վերջապէս 1890 թ-ին Անանով ստացաւ Բրիւսէլի միջազգային մրցման ժամանակ մեծ ոսկեայ մեդալ: ՀԱՅԷՆ, Ростовъ на Дону, Сергѣю Михайлову АНАНОВУ.

6-10

ԱՆՈՒՑԻ ԵՒ ԸՆԿ.

Խոնարհաբար խնդրում է շերտի սերմի յարգելի առնություններն զիմի կՈՂԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆԵՍՈՒՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆԸ, կամ Թիֆլիսի շերտապահական կայարանը:

Մեծ քանակութեամբ առնողները թող բարեհաճեն զիմի կողմանէն Գիւղատնտեսական ընկերութեան անդամ պ. Վ. Ա. ՍՈՒԽՈՎԻՉԻ, Թիֆլիսում, կուկիա, Նիկոլաեկայա փողոց, տուն № 39.

Պ. Ալօղիի սերմերը ծախվում են 1, 3, 5 և 10 զօրանիկ կշռող արկղներում, հաշվով իւրաքանչիւր զօրանիկը 60 կոպէկով: Սերմի լաւութեան երաշխատութիւն կարող է լինել այն, որ ինքն պ. Ալօղի վարձատրված է պատուաւոր զիւղով և ցելլելի սերմի պաշտօնական հայտայթով է թուրքեստան երկրում:

2-16 (շ.)

Յ. ԱՆՈՒՑԻ

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՏՐԱԿԱԳԻՐ Վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՏԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշվարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/6-ից մինչև 12/6. վաճառվում է եղբայր Ծովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաբաղադրացիք զիմում են վերջին հասցեով С. П. Мануэляну.

Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիւղում կը լինի: 44-150

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵՆՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենավերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԴԵՎԻ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած եւ ֆոնտայն:

Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱԿԵՐԸ ԳՈՐԾ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 6/18 նոյեմբերի

— 20 նոյեմբ. (2 զեկտեմբերի) —

— 24 նոյեմբ. (9 զեկտեմբերի) —

— 11/23 զեկտեմբերի

— 1Ը ՎՕԺ —

— ՄԻՆԳՐԵԼԻԱ —

— ՍԻՐԿԱՍԻ —

— ԲՕՇԵԼ —

— ՄԱՆԿԱ —

— ԺԻՐՈՒԷՆ —

— ԲՕՇԵԼ —

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Ցամաքների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից Դեւի Պարիզ իսկական գնից պակեցրած են:

Տեղեկութիւնների համար ծանապարհորդներին և բեռների մասին թող բարեհաճեն զիմի ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄԻՍՏ պ. Գարանիօնին, Նաբեբէժայա, Թիֆլիսում պ. Վիկտոր ԴՄԱՐՏԻՆ, Միջին-փողոցում, նախկին գներալ Տէր-Ասատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամսոն Գիւղարովին, Կոլբերկիսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՍԻՑ-ՍԿՈՒՄ պ. Լուի Բնօին:

6-6 (ե. շ.)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Պատիւ ունեմ յայտարարելու, որ այսուհետեւ իմ հրատարակութիւնների գները և նրանց զեղջը գնողներին համար լինելու են հետեւեալ չափով:

1) Աղայանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, ա. տ.	գինը 25 կ. զեղջը 20%
2) » Ուսումն Մայրենի լեզուի, բ. տ.	» 40 » » »
3) » Ուսումն Մայրենի լեզուի, գ. տ.	» 55 » » »
4) Գեորգեզեանց՝ Թուրքական լեզուի, մ. ա.	» 40 » » »
5) » Թուրքական լեզուի, մ. բ.	» 50 » » »
6) Թուրքական լեզուի, մ. ա.	» 25 » » »
7) Մանդինեանց՝ Ռուսական աշխարհ, ա. տ.	» 25 » » »
8) » Գիւցաղական աշխարհ, բ. տ.	» 30 » » »
9) » Նահապետական աշխարհ, գ. տ.	» 60 » » »
10) Հինգէլի՝ Բանաւոր և գրաւոր հաշիւու խնդիրներ, մ. ա.	» 40 » » »
11) » նոյն մ. բ. երրորդ տարի	» 50 » » »
12) Տէր-Ղանդեան՝ Մայրենի լեզու, ա. տ.	» 35 » » »
13) » Մայրենի լեզու, բ. տ.	» 40 » » »
14) » Մայրենի լեզու, գ. տ.	» 50 » » »
15) » Մայրենի լեզու, գ. տ.	» 65 » » »
16) » Մայր. լեզ. քերականութեան տարրերը, մ. ա.	» 30 » » »
17) » լեզ. քերականութեան տարրերը, մ. բ.	» 40 » » »
18) » Մայրենի լեզ. բացատրական ձեռնարկը	» 30 » » »
19) Հայորդի՝ Սրբազան պատմութիւն Հին կտակարանի	» 50 » » 30%
20) » Սրբազան պատմութիւն Նոր կտակարանի	» 50 » » »

Գրքերի վաճառումը կանխիկ է. ապառիկ ոչ դրէ զիւր չենք ուղարկում: Մեր հրատարակութիւններից զատ ուրիշ գրքերի համար պատուէր չենք ընդունում:

3-3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

ՊԱՏԻՒ ՈՒՆԵՆԳ յայտնելու, որ մօտ ապագայում ընդարձակելու ենք մեր ՏՊԱՐԱՆԸ Մօսկվայում, և այդ նպատակով տեղափոխել ենք ուրիշ բնակարան: Պատուէրները կը կատարվեն աւելի շուտ և նոյն մաքրութեամբ, ինչպէս մինչև այժմ:

Նախահաշիւները ուղարկվում են անյապաղ:
Խնդրում ենք այն պարոններին, որոնք մեզ հետ թղթակցութիւն ունեն, թող բարեհաճեն զիմի մեզ հետեւեալ հասցեով. МОСКВА, Мясницкая, д. наслѣдниковъ Ананова, типографія М. БАРХУДАРЯНЦЪ.

3-3

ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԿԻՆ ԱՏԱՄԵՆԱԲՈՅԺ Մ. Բ. ՀԵՂՈՒԲԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր, 9 ժամից առաւօտեան մինչև 5 ժամ՝ կէսօրից յետոյ, Գօլովնիսկի պրօսպեկտ, տուն Անանովի, № 22.

4-15

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐԲԵՐԸ

1) ՇՄԻԴԹ, «Ֆրանկլին», 2 տիպ. սակաւաթիւ	— Բ. 40 կ.
2) » «Վաշինգտոն», 2 տիպ.	— 60 »
3) » «Հոմերի իլիական», պատկերներով.	1 » —
4) » «Հոմերի Օդիսական»	1 » 20 »
5) ՍՄԱՅԼՍ, «Բնաւորութիւն»	1 » 50 »
6) ԱՄԻՁԻՍ, «Սիրտ»	1 » —
7) » «Ապէնիններից մինչև Անդերը»	— 10 »
8) «Ռուստեմ և Զօհրաբ»	— 20 »
9) ՇԻԼԼԻ, «Աւաղակներ», ողբերգութիւն.	— 50 »
10) ՍՄԱՅԼՍ, «Ինքնօգնութիւն»	1 » 50 »
11) ՏՈԼՏՈՅ, «Ռօբինզօն», փոքրերի համար	— 20 »
12) » «Կօլումբ», փոքրերի համար	— 15 »
13) ՀԱՅՁԷ, «Բէյաթըշէ, վէպիկ	— 30 »
14) » «Նոնգայի բերդը», վէպիկ	— 30 »
15) ՇՄԻԴԹ, «Ռէնիսանսէ աղուէր»	— 60 »

Հանապարհաժախը թարգմանչի վրա է: Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Марино-Анановское училище, և կինսրօնական գրավաճառանոցում: 9-10 (Գ)

Հոկտեմբերի 20-ից

ՊԱՏԱՀԱԿԱՆ

1891 թ-ի

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԱԳԱԶԻՆ

ՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍ

ՋԳԵՍՏՆԵՐԻ

Վ. և Ա. ԽՈՒԴԱՎԵՐԵԱՆՑ ԵՂԱՅՐՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍԻՄ

Գօլովնիսկի պրօսպեկտում, I զինաղիայի զինաց, տուն Մզիկանի

ԱՇՆԱՆ ՍԷՉՕՆԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Միայն 30 օրվայ ընթացքում

կը լինի

ՎԱՃԱՌՈՒՄՆ բոլոր եղած ապրանքների այլ և այլ զործարանների 30% պակաս քան ֆաբրիկաների գները:

Բացի Ս. ԿԱՄԼԵՏԻ ֆաբրիկայից:

Մագազինը ուղարկութիւն է դարձնում մանաւանդ մարդկանց համար ստացված մեւշտոնների, պաշտօնների և զեւստների ՄԵԾ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ վրա: Այդ ապրանքները իրանց նոր ձեւերի, իրանց նիւթի յատկութեան և արտաքին տեսքի կողմից զիմանալու են ամեն տեսակ ՄՐՅՄԱՆ:

Բոլոր այդ ապրանքները մենք առել և մեր հսկողութեան տակ պատրաստել ենք տունը ՄՕՍԿՎԱՅՈՒՄ:

9-9

Մամուլի տալին են և շուտով լոյս կը տեսնեն առանձին հատորով

ԲԱՅՖԻԻ

ՎԵՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿՆԵՐ

(տպված և անտիպ ձեռագիրներից)

Հեղինակի երիտասարդութեան պատկերով

Գինը կանխիկ վճարողների համար 3 ռուբլի: Լոյս տեսնելուց յետոյ 3 ռ. 50 կոպէկ: Ցանկացողները կարող են զիմի հեղինակի այրին հետեւեալ հասցեով՝ Тифлисъ, Сергѣевская ул., № 20 Анна Раффи.

3-5

Ա. ՐԱԼԼԵ ԵՒ ԸՆԿ.

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՀԱՅԹԱՅԹՈՂՆԵՐ

ՆՈՐՈՒԹԻՒՆ

XX դարի

Սպիտ. եասաման

Կապանիկի վարդ

Չերեմուխայի

Իշխանական

Մայիսան ծաղիկ

Պարսից եասաման

Սպիտակ եասաման

Դաշտի ծաղիկներ

Սպիտակ իրիս

ՎԱՅԵԼԻՆԵԱՆ ՍԱՊՈՆ—ՎԱՅԵԼԻՆԵԱՆ ՊՕՄԱԴ

Մախվում է ուսաց կայսերական բոլոր քաղաքներում. ՊՐԵՑԿՈՒՐԱՆՏ ձրիապէս է ուղարկվում:

3-5 (շ.) № 1

ՄԱՐԱՏՕՎ ԻՑ

14—20




ВЪ ОДЕССѢ.

91-100 (L. 2.)



ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են:



2-3



ԳԱԶՈՒԹՅՆ ՆՈՐ ՀԱՐՈՒՇՏՆԵՐ

Օտառ սխառեալի, որմբ իրանք
անց են ուղղում ու օժում:

Գազի համար	—	աճուխից,
—	—	հստից,
—	—	անորայից,
—	—	կիւռնից

$\frac{1}{5}$ էջ մնչև 120 ձևու ուժի:

Հօդեմքնանի մն՝ արադու-
թիան.

46—100 (k, z.)

ԵԼԻՆՏՆԱԿԱՆ ԼՈՒԱՐԱՌՈՒՊԻԵՆ
 Ուժի հաղթանակ տարածություն
 վրա.
 ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼՆԵՐԸ
 Ելեկտրական հեռաներ.
 ՁԱՆԳԱՆԵՐ
 ԳՈՂԱՆԵՐՈՒՄՏԻՎԱԿ.
 Ելեկտրոնային,
 Ափսոսալիցաներ, Ելեկտրոնային,
 ՇԱՆՔԱՐՔԵԼՆԵՐ.
 Նախաճաշիկներ և ճրպրիկներ ձրի-
 արար.

ՄԻ ՕՐԻՈՐԴ ցանկանում է զասեր ունենալ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ, երեսաների հետ
հայոց և ռուսաց լեզուներով պարապելով:
Ցանկացողները կարող են գլխիկ «ՄՇԱԿԻ» խմբագրատունը: 4-5

ԼՊՄԷՆ տեսել
ԺՈՂՈՎԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Հետևեալ զբեկը:

1. ԱՍԸ, թիւը աշակերտ կեանքից (սպառւած)	5
ԽՈԼԵՐԱ և նրա առաջն առնելու միջոցներ	5
ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ, Գրեգոր Արժրուհու	10
ԱՐՆԱԳԻՆ, Լէօն, (սպառւած)	7
ՊՍՏԻԿ Է ԲԱՅՑ ՉՍՏԻԿ Է, Լուսկիկիչի (սպառւած)	5
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ	5
ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալուժեանի	50
ԼԻՐ ԹԱԳԱՌՈՐ (ըստ Շէկսպիրի)	5
ԻՆՉ Է ԿԱՅԾԱԿԸ	5
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Շէկսպիրի, Թարգ. Խ. Մ.	5
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ	5
ԳԻՒՂԱԿԱՆ ԶՈՒԹԱԿԱՀԱՐ	5
ԳԼԲԱՅՐ ԵՂՔՐՈՐ ԳԷՄ	7
ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱՐՈՒՂ	6

Տպագրվում է և շուտով լրջա կը տեսնեն կենդանական աշխարհից «կապիկների կենանը», Գարշինի «Արջերը» և Ժողովրդական ընթերցանութեան ուրիշ գրքեր:

Դիմել թիֆլիս. Խ. Մալումեան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ),
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
Ա Ա Դ Ի Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԻԻԱՍԱՐԳԵԱՆ-10-11 ժ. վերաբուժով ժեռան (և առամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի:
ԲՈՒԿԿԵՈՎԱԿԻ-10-11 ժ. ներքին, հրեխայոց և կանանց ց.
ԿԻԼԻՔԻԴԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՅ-11¹/₂-12 ժ. կանանց և հրեխայոց ց.
ՊՐՈՏԱՍՍԵՎԻԶ-12-1 ժ. ակնաջի, կոկորդի և ջրթի ց.
ԿԱՍԱՊԵՏԵԱՆՅ-12¹/₂-1 ժ. ներքին և հրեխայոց ց.

ԵՐԵՎԱՆԻ

ԳԱՆՈՒԹԱՄԱՍԿԻ—5—6^{1/2} Ժ. Կաշուրի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 Ժ. ներքին, երեխայոց և ջլային ց. (էլեկտրոստերապիա),
ՆԱՌԱՍԱՐԴԵԱՆ—6—7 Ժ.

վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսուլիումի) համար առանձին։
Հիւանդանոցի վերադասուհ Բժշկապետ Նաւասարդեան